ԵՐԵՎԱՆՅԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՑ՝ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՎ

# «ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՄԲ» ԳԵՐՎԱԾ «ԱՐՏԱՎԱԶԴԸ»

*«Վրաստանը» արդեն գրել է, որ մարտի 25-ին, Հայաստանի թատերական գործիչների միության (ՀԹԳՄ) կողմից Երեւանում անցկացվող «Արտավազդ» մրցանակաբաշխությանը, ադամյանցիները ներկայացան Մարիա Լադոյի «Սովորական պատմություն» ներկայացումով՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի բեմադրությամբ: Ներկայացումը հաղթանակեց «Լավագույն երիտասարդական ներկայացում» անվանակարգում եւ նվաճեց ՀԹԳՄ-ի «Արտավազդ» մրցանակը: Նույն մրցանակին արժանացավ նաեւ Երեւանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի «Մեդեա» ներկայացումը (բեմադրիչ՝ Գ.Խաչատրյան): «Արտավազդ-2016»-ի փառատոնի շրջանակներում, թատերարվեստին երկարամյա նվիրումի եւ մատուցած ծառայությունների համար, ՀԹԳՄ Ոսկե մեդալով պարգեւատրվեց Ռոման Նուրալյանը, մեր թատրոնի անխոնջ մշակն ու 50-ից ավելի տարիների փորձ ունեցող դիմահարդարը:*

*Երեւանից վերադառնալուց անմիջապես հետո, մենք հանդիպեցինք եւ զրուցեցինք Արմեն Բայանդուրյանի հետ:*

***- Արմեն Սերգեյի, «Վրաստան» թերթի աշխատակազմն ու մեր ընթերցողը սիրով միանում են շնորհավորանքներին, բարեմաղթանքներին եւ սպասում այն օրվան, երբ մրցանակակրի՝ «Սովորական պատմության» ակնդիրն ու ունկնդիրը կդառնանք արդեն մեր՝ վերանորոգված թատրոնում:***

- Շնորհակալ եմ: Հուսանք, որ հանդիպման երանելի պահը երկար սպասել չի տա: Միանգամից ասեմ, որ «Սովորական պատմությունը» արտասովոր մի ճանապարհ է սկսել. նրա առաջնախաղը կայացավ նախորդ տարի՝ նոյեմբերին, Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան թատրոնի լեգենդար բեմում, որին, ի դեպ, մեր թատրոնը մոտ 100 տարի չէր բարձրացել: Հետո արդեն Երեւան եկանք եւ «Արտավազդով», ասել է թե «հայկական Օսկարով», ծննդավայր վերադարձանք: Եվ շատ հնարավոր է, որ երրորդ բեմելն իսկապես մեր թատրոնի վերաբացմանը պահենք:

***- Բեմադրիչը Դուք եք, հետեւաբար, հաղթանակի գերակշիռ մասը Ձերն է...***

- Ոչ, ոչ... սա ամբողջ թատրոնի հաղթանակն է, որովհետեւ յուրաքանչյուր ներկայացման մեջ, ուղիղ թե անուղղակի կերպով, ներգրավված են բոլորը, մեկը՝ որպես դերասան, ապա նաեւ նկարիչ, հանդերձավորող, մյուսը՝ հանդիսատես, երրորդը՝ օգնական, չորրորդը՝ հարդարող ու նույնիսկ հավաքարար ու հուշարար եւ այդպես շարունակ: «Սովորական պատմության» մեջ ընդգրկված է մեր թատրոնի երիտասարդությունը, նրա ապագան ու տաղանդավոր հունձքը, մոտ 10 հոգի՝ Նանո Պողոսյան, Սնեժանա Յաղուբովա, Գլորիա Գեւորգյան, Գագիկ Մելքումյան, Նարեկ Բայանդուրյան, Էդուարդ Մուրադյան, Արթուր Գասպարյան, Քրիստինե Միրզոյան, Սոֆյա Ներսիսյան եւ Արամ Միքայելյան: Եվ չնայած մրցանակը այս շնորհալի երիտասարդների վաստակն է, ես, այդուհանդերձ, շնորհավորում եմ բոլորիս, «Արտավազդ-2016»-ը բոլորինս է անխտիր:

***- Փաստորեն, վիրահայոց թատրոնում արդեն չորս «Արտավազդ» ունեցանք:***

- Այո: «Արտավազդ» մրցանակաբաշխությունը մոտ տասնհինգ տարվա պատմություն ունի, եւ մենք, որ սկսել ենք մասնակցել ավելի ուշ, նվաճել ենք մի քանի մրցանակ: Դրանք պատկանում են մեր թատրոնի մեծանուն դերասաններին, թատերարվեստում երկարամյա ծառայության դիմաց՝ Վրաստանի ժողովրդական եւ Հայաստանի վաստակավոր արտիստ երջանկահիշատակ Սերիկ Շեկոյանին, ապա նաեւ մեր գործող դերասաններին՝ Վրաստանի վաստակավոր արտիստ Ժիրայր Կարապետյանին եւ անցած տարի՝ Լավագույն կին դերակատար Լեյլա Մկրտչյանին:

***- Ասում են, նահանջ տարի է, բայց մեր թատրոնին դա իրավամբ չի վերաբերում, ընդհակառակը, գրավում ենք ու նվաճեցինք նոր «Արտավազդ»: Եվ նույնիսկ շենքի վթարային լինելու հանգամանքն ու փակ դռները խոչընդոտ չեն հանդիսանում:***

- Անշուշտ: Այս հինգ տարիների ընթացքում, ինչ չենք խաղում մեր բեմում, մենք երբեք կանգ չենք առել՝ բնականոն ընթացքը, նոր դերասանների ընդունելությունն ու առաջնախաղերը, հյուրախաղերն ու մասնակցությունը փառատոնային տարբեր ծրագրերի, շարունակել են կերտել 160-ամյա պատմության մեր էջերը: Եվ առհասարակ, եթե հոբելյան նշելու հարուստ առիթ կա, էլ ի՞նչ նահանջի մասին է խոսքը: Այս պահին կրկին աշխատում ենք ու պատրաստվում առաջնախաղերի, գործում են մեր թատրոնի բոլոր ռեժիսորները՝ Լեւոն Ուզունյանը, Ռոման Մաթիաշվիլին, Գագիկ Մելքումյանը... իսկ իմ բեմադրությամբ Նոդար Դումբաձեի «Մեղադրական եզրակացությունը»՝ հայերեն եւ վրացերեն հնչողությամբ, մոտ ժամանակներում կմասնակցի Թբիլիսիում Մեծն գրողին նվիրված փառատոնին, Ռուսթավելու թատրոնում, ի դեպ, ազատ մուտքի հնարավորությամբ:

***- Եվ հարցերից ցավոտը՝ շենքի վերանորոգումը:***

- Արդեն ցավոտ չէ: Ապրիլին սկսում ենք: Երեւի այնքան ենք սպասում, որ թվում է՝ բոլորս պետք է մասնակցենք քարը քարին դնելու այդ շնորհակալ գործին: Ըստ նախատեսվածի, աշխատանքները պետք է ավարտվեն մեկ տարի ժամկետում:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻՆ

*2016 թվականի մարտի 29-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ընկերակցությամբ Քվեմո Քարթլիի հայկական համայնքների հոգեւոր հովիվ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանի, այցելեց Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոն:*



Թատրոնի ղեկավարության եւ ստեղծագործական անձնակազմի հետ հանդիպմանը ներկա էին թատրոնի առաջատար դերասաններ Մելանիա Բարսեղյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Ռոման Մաթիաշվիլին: Այստեղ էին նաեւ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Սրբազան հայրը իր օրհնությունը բերեց Սուրբ Հարության տոնի առիթով՝ շնորհավորելով դերասանների Սուրբ Զատիկը: Առաջնորդը թատրոնի գեղարվեստական ղեկավարին եւ դերասանական կազմին շնորհավորեց օրերս Երեւանում «Արտավազդ» մրցանակ ստանալու համար: Ադամյանցիները «Լավագույն երիտասարդական ներկայացում» անվանակարգում մրցանակի արժանացան «Սովորական պատմություն» ներկայացման համար:

Թեմակալ առաջնորդը, կարեւորելով թատրոնի վերանորոգչական աշխատանքները, նշեց, որ Վրաստանի վարչապետի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի զատկական այցի ժամանակ վերջինիս ուշադրությանն է հանձնվել թատրոնի վերանորոգության հարցը եւ այն կարեւորությունը, որ ունի թատրոնը հայ համայնքի կյանքում: Հանդիպմանը Սրբազան հայրը ցանկացավ եւ փափագեց, որպեսզի ամենամյա սայաթնովյան «Վարդատոնը», ինչպես եղել է ավանդաբար, այսուհետ եւս ծրագրի եւ իրականացնի Պետրոս Ադամյանի անվան թատրոնը, իսկ համայնքային մյուս կառույցները աջակից եւ զորավիգ լինեն:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն իր երախտագիտությունը հայտնեց առաջնորդին օրինաբեր այցելության համար:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ - 140

# ԻՍԱՀԱԿՅԱՆԱԿԱՆ ԲԱՌԻ ՂՈՂԱՆՋՆԵՐԻ ՆԵՐՔՈ...

*Գեղեցիկ եւ հուզառատ էր նախանցյալ օրվա իրիկունը Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում: Այն շնչում էր հայ գրականության մեծաց մեծերից մեկի՝ Ավետիք Իսահակյանի Խոսք ու Բառի հեւք ու հույզով, մրմնջում դրանց ղողանջների ներքո, վայելելում դրանց մոգական ուժը, մի անգամ եւս ըմբոշխնում դրանց հոգի զուլալող զորությունը, փիլիսոփայությունը, դասականի մարդկային ընդվզումները, կարոտը, սերը, հայրենասիրությունը, մարդասիրությունը...*

Այստեղ էին հավաքվել թբիլիսահայության տարբեր շերտերի ներկայացուցիչներ՝ ընթերցողներից մինչեւ գրողներ, լրագրողներ, մանկավարժներ, հասարակական գործիչներ, գործարարներ... Այստեղ էին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, անվանի թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Հայարտան» տնօրեն Լեւոն Չիդիլյանը, գործարար Սամվել Աղեկյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական Կարեն Պարունակյանը եւ մշակութային հարցերով կցորդ Էլինա Մկրտչյանը:

Եվ իսահակյանական լուսավոր երեկոն, որը բացեց կրթության բաժնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը, Վիրահայոց թեմին կից ու նրա աջակցությամբ գործող Սուրբ Եղիա մարգարեի անվան Կիրակնօրյա դպրոցի ոչ հայերեն կրթությամբ սաների ուժերով, դարձավ եւս մեկ անհերքելի ապացույցը հայապահպան իրողության: Եվ երեկոն մտահղացող, այն կազմակերպող ու վարող ուսուցչուհու խոսքն էլ իրեղեն ապացույցն այն բանի, թե ինչպիսին պիտի լինի սփյուռքում ապրող հայոց լեզվի ու գրականության ուսուցիչը, ինչպես պիտի ոչ միայն հայկական կրթությամբ, այլեւ,



հանգամանքների բերումով վրացական կամ ռուսական կրթություն ստացած երիտասարդների մեջ ներարկի սեր հայոց լեզվի, հայոց բառ ու բանի, հայոց այբուբենի, նրա բոլոր 39 հրաշք տառերի հանդեպ:

Այս անխոնջ նվիրյալը վիրահայերիս քաջածանոթ Ռոզա Ջոհրաբյանն է: Արհեստավարժ մանկավարժ՝ հայոց լեզվի ու գրականության բազմավաստակ ուսուցչուհի (որն այսօր, ցավոք, միայն Կիրակնօրյա դպրոցում է աշխատում, բայց ոչ՝ հանրայինում...), հասարակական գործիչ, Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիական ամենաբարձր շքանշանների ասպետ, իր անձնական կյանքը մատաղ սերնդի դաստիարակությանը զոհաբերած անձ: Նաեւ միջոցառումների վարպետ, հրաշալի արվեստասեր, «Վերնատուն» գրողների միության անդամ, երգչուհի...

Գրական- երաժշտական կոմպոզիցիան ու Ռոզա Ջոհրաբյանի իսահակյանապաշտությունը, որ այնքան վառ արտահայտություն գտավ թե' Իսահակյանին ներկայացնող իր խոսքում ու երգում, թե' իր սաների ելույթներում, եւս մեկ վկայությունը դարձավ բազմավաստակ ուսուցչուհու ներքին այրումի ու իր գործին անմնացորդ նվիրումի...

Այս երեկոն էլ, ինչպես Ջոհրաբյանի բոլոր դասերը, դարձյալ սիրուն դասի նմանվեց... Ուսուցանո'ղ դասի, ծանոթացնո'ղ դասի... Տոնակա'ն դասի... Հրավիրո'ղ դասի...

Ես էլ խոսեցի... Իսահակյանին խոնարհվեցի՝ որպես Մեծի... Որպես վրաց ժողովրդի մեծ բարեկամի: Այդ նա՝ Իսահակյանն էր ասում, որ «Մեր ժողովուրդների պատմության մեջ եղել է սուրբ ավանդություն: Որպեսզի է'լ ավելի ամրացվի եղբայրությունը, այնտեղ, որտեղ միասին էին ապրում հայերն ու վրացիները, վրաց մայրերը իրենց կրծքով կերակրում էին վրացի երեխաներին եւ ընդհակառակը»:

Իմաստալից էր ու ճանաչողական Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի գնահատականի խոսքը: Իսահակյանի դերի մասին հայ գրականության մեջ, նրա հայրենասիրական ոգու, նրա եւ Մայր Աթոռի Գերագույն Խորհրդի ազգանպաստ կապի մասին: Նա հատկապես արժեւորեց եւ ընդգծեց Ջոհրաբյանի դերը Կիրակնօրյա դպրոցում, նրա պրպտող էությունը: Նշեց, որ շուտով գիրք լույս կտեսնի, որը կներկայացնի Կիրակնօրյա դպրոցի պատմությունը, նրա մատենագրությունը:

...Վարակիչ էր իսկապես այս երեկոյի սերը... Սերը Իսահակյանի հանդեպ, Սերը պոեզիայի հանդեպ, հայերենին նոր-նոր սիրահարված երիտասարդների սերը մայրենիի հանդեպ... Նրանց հոգու մեջ միշտ առկա, բայց դրսեւորում չգտած սերը... Որ շնորհիվ իրենց ուսուցչուհու հետեւողական, ջանադիր աշխատանքի, հիմա դուրս էր եկել կապանքներից ու ներկայանում էր հանրությանը: Ու նրանց դեմքերը շողում էին... Նրանց՝ Լիանա Մազմանյանի, Սոֆա Սումբատյանի, Սերգեյ Չարուխչյանի. Վիտալի Բրեժնեւի, Իլոնա Աղաջանյանի, Ասյա Չիվչյանի, Ստելլա Սելեպանովայի, Ինեսա Շահինյանի, Թամար Մերոյանի, Ռուզաննա Մուրադյանի, Գիորգի եւ Արայիկ Մինասովների, Անդրանիկ Բադալյանի, Ասլան Մխիթարյանի... Արմատների կանչը զորեղ է միշտ... Նրանց կանչը հարահոս է ու հարամնա... սեփականին վերադարձի ուժը՝ անկասելի: Վկան՝ Վարպետին նվիրված այս երեկոն:

*ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

ÎðàÜ²Î²Ü

## ՔՐԻՍՏՈՍԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԿՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԻ



***Լսեմ եմ, որ Երուսաղեմում ծրագրվում է Քրիստոսի գերեզմանի վերանորոգումը: Ասում են նաեւ, որ դրա համար գումար է հատկացրել նաեւ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին: Իրոք, այդպե՞ս է:***

***Ա. Մինասյան***

***Թբիլիսի***

Իրոք, Սուրբ հողի եկեղեցիները մի քանի շաբաթից կսկսեն Հիսուս Քրիստոսի գերեզմանի վերակառուցման աշխատանքները:

Մարմարե սալիկներով գերեզմանը տասնամյակներ շարունակ հիմնանորոգման չի ենթարկվել` ընդունելով օրական հազարավոր ուխտավորների ու զբոսաշրջիկների: Փոխարինվելու են գերեզմանի սալիկների միայն ջարդված եւ փլված մասերը, մնացած հատվածները կմշակվեն, մարմարե բեկորները պահող կառույցը կամրացվի: Մատուռը կապամոնտաժվի եւ կվերականգնվի նախկին տեսքով:

Ինչ վերաբերում է հատկացվելիք գումարներին, ապա աշխատանքների իրականացումը ֆինանսավորելու են Սուրբ հողի երեք հիմնական եկեղեցիները` Հայ Առաքելական, Հույն Ուղղափառ եւ Կաթոլիկ: Միջոցներ կներգրավվեն պետական եւ մասնավոր հատվածից: Աշխատանքները կսկսվեն մայիսից եւ կավարտվեն 8 ամսում: Այդ ընթացքում Քրիստոսի գերեզմանը կշարունակի բաց լինել ծիսակատարությունների համար:

Հիսուսի գերեզմանը գտնվում է Հարության տաճարի կենտրոնում:

Æð²ì²Î²Ü

## ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ 600 ՆՈՐ ՀՈԳԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ



***Եթե հնարավոր է, կցանկանայի իմանալ, քանի՞ տեսակի դեղորայք է համարվում թմրանյութ, որի օգտագործումը դատապարտվում է: Եվ գոյություն ունի՞, արդյոք, վիճակագրություն թմրամոլությունից զոհվածների մասին:***

***Ե.Կ.***

***Մառնեուլի***

Թմրանյութերի վերահսկողության միջազգային կոմիտեն, ՄԱԿ-ի այս մասնագիտացված հիմնարկությունը, որը գտնվում է Վիեննայում, հետեւում է աշխարհում թմրադեղերի եւ հոգեմետ նյութերի օրինական շրջանառությանը, ինչպես նաեւ աշխատում է կանխել դրանց ապօրինի արտադրությունն ու տարածումը, հրապարակել է հաշվետվություն, ըստ որի, 2015 թվականի հոկտեմբերի դրությամբ, ՄԱԿ-ի ԹՀՎՎ-ի (Թմրանյութերի եւ հանցավորության վերահսկողության վարչության) խորհրդակցական խումբը հաստատել է 602 եզակի սուբստանցիաներ` 55 տոկոսով ավելի, քան այն 388 նյութերը, որոնց մասին երկրները հայտնել էին 2014 թվականին, եւ որ նոր նյութերի մեծամասնությունը` գրեթե 40 տոկոսը, ինչպես եւ անցյալ տարի, դասվում է սինթետիկ կանաբինոիդների տարակարգին:

ԹՎՄԿ-ի տվյալներով, Հյուսիսային Ամերիկան մնում է թմրանյութերի գործածության հետեւանքով մահացության ամենաբարձր մակարդակն ունեցող տարածաշրջանը: 2013 թվականին տարածաշրջանի երեք երկրներում` Կանադայում, Մեքսիկայում եւ ԱՄՆ-ում, գերդոզավորումից եւ վատ սովորության առաջացրած հիվանդություններից մահացել է 43 հազար 300 մարդ: Այսպիսով, մահացության մակարդակը կազմել է 1 միլիոն բնակչի հաշվով 136,8 մահ` եռակի ավելի, քան միջին գլոբալ ցուցանիշը. 40-50 մահ` 1 միլիոն մարդու հաշվով: Ըստ որում, մոլորակի այն հինգ բնակիչներից մեկը, որ մահացել է թմրանյութերի գործածության հետեւանքով, բնակվել է Միացյալ Նահանգներում:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ` ՖԻԶԻԿԱԿԱՆ ՑԱՎԻ ՊԱՏՃԱ՞Ռ

***Ամերիկացի գիտնականները պարզել են, որ ֆինանսական խնդիրներ ունեցող մարդիկ շատ ավելի մեծ ֆիզիկական ցավ են զգում, քան նրանք, ովքեր իրենց դասում են ապահովվածների թվին:***



Բացի այդ, դրամական բնույթի խնդիրները բացասաբար են ազդում ցավային շեմի վրա եւ մարդկանց հարկադրում են ավելի հաճախ գործածել ցավազրկողներ: Այս մասին ասված է Psychological Science հանդեսում հրապարակված հոդվածում:

Գիտնականները նման եզրակացությունների են հանգել` վերլուծելով վեց անկախ հետազոտությունների արդյունքները: Այսպես, դրանցից մեկում 2008 թվականին հայտնաբերվել է կախվածություն աշխատանքի կորստի եւ ցավազրկողների հավելյալ գործածման միջեւ: Իսկ մյուսում` օրինաչափություն, որի համաձայն, ճգնաժամային եւ կայուն տարիներին, ֆոկուսխմբերի մարդիկ ավելի հաճախ կամ ավելի հազվադեպ են դիմել բժիշկների: Համապատասխանաբար, ֆինանսական անկայունության շրջաններում մարդիկ ավելի հաճախ են մասնագետների ուշադրությունը հրավիրել հիվանդությունների եւ զգացվող ցավի վրա:

Հետազոտողներին հաջողվել է պարզել, որ տնտեսական անպաշտպանվածության զգացումն ակտիվացնում է տագնապի, վախի եւ սթրեսի հետ կապված մեխանիզմները: Դրանք նման են այն գործընթացներին, որոնք մարդկանց ստիպում են ցավ զգալ:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ԴԵՄՔԻ ՄԻՋՈՑՈՎ



***Բավական է մի հայացք գցել մարդու դեմքին, որպեսզի նրա մասին իրականում ամեն ինչ իմանալ: Եվ, չնայած աչքերը հոգու հայելին են համարվում, հատկապես, դեմքի վրա կարելի է «կարդալ», թե ինչպիսի՞ հիվանդություններով է մարմինը տառապում:***

Պաթոֆիզիոգնոմիկա` այսպես է կոչվում գիտության այն ճյուղը, որը զբաղվում է դեմքի վրա տեսանելի հիվանդությունների ախտորոշմամբ, եւ միայն փորձառու աչքը կարող է տեսնել այնպիսի փոփոխություններ, ինչպիսիք ոչ ոք չի կարող նկատել: Շատ հաճախ, առաջին հայացքից կարելի է որոշել գենետիկական անբուժելի հիվանդություններ, որոնք փոխում են դիմագծերը: Սակայն պետք չէ փորձագետ լինել այս բնագավառում, որպեսզի սովորել կարդալ հիվանդություններն ու խանգարումները դիմագծերով: Օրգանիզմն ինքն է փորձում բոլոր հնարավոր միջոցներով մեզ տեղեկացնել հիվանդությունների մասին: Հարկ է միայն հասկանալ նրա «լեզուն», որով նա ազդանշաններ է ուղարկում մեզ:

### Աչքերը



Որոշ հիվանդություններ փնտրեք աչքերի մեջ: Եթե կոպերը հաճախ են այտուցվում, դա նշանակում է, որ խնդիրներ կան վահանագեղձի հետ, կամ կարող են երիկամային անբավարարության ախտանիշներ լինել: Հարկ է խորհրդակցել բժշկի հետ, ով անհրաժեշտ բուժախտորոշման կուղարկի:

Եթե ձեր ակնախնձորները բորբոքված կամ կարմրած են եւ հրահրված չեն վնասվածքներով կամ մեխանիկական գրգռվածությամբ, հատկապես, կարմրած, արցունքոտվող աչքերը կարող են վկայել կոնյունկտիվիտի մասին: Կոնյունկտիվիտն աչքի լորձաթաղանթի բորբոքումն է, որն անհապաղ բուժում է պահանջում:

Իր հերթին, կոպերի ջղածումը տեղեկացնում է օրգանիզմում մագնիումի անբավարարության մասին: Սրտի եւ նյարդային համակարգի հիվանդությունների կանխարգելման նպատակով, հարկ է լրացնել մագնիումի պաշարներն օրգանիզմում: Դա կարելի է անել դեղահաբերի միջոցով կամ օրվա սննդակարգը հարստացնել մագնիումով հարուստ մթերքով` հատիկավորներ, ընկուզեղեն, խոշոր աղացվածքի ալյուրից հաց եւ այլն:

Աչքերը երիզող մուգ շրջանակները կամ դրանց տակ առաջացած պարկիկներն անհանգստության հերթական պատճառն են: Եթե այն հոգնածության կամ անքնության արդյունք է, բավական է դեղաբույսերից կամ սեւ թեյից պատրաստված թրջոցներ դնել: Եթե նման ախտանիշները դրսեւորվում են նույնիսկ այն դեպքում, եթե լավ եք քնում, ապա դա կարող է ահազանգել ալերգիայի կամ զարկերակային գերճնշման մասին:

Արյան մեջ խոլեստերինի եւ տրիգլիցերիդների անբավարար մակարդակը կարող են բնորոշ լինել աչքերի շուրջ դեղին հետքերին: Դա միայն էսթետիկ խնդիր չէ, եւ դիմահարդարին մեկ անգամ այցելելը բավական չէ: Սկզբում հարկ է համապատասխան հետազոտություններ անցնել սիրտ-անոթային հիվանդություններից խուսափելու համար:

### Կնճիռները



Կնճիռները սովորաբար մաշկի եւ օրգանիզմի ծերացման նշան են համարվում, սակայն, եթե ճակատին շատ կարճ ժամանակում նշմարվում են խոր, լայնակի ակոսներ, ապա դրանք մարսողության եւ ստամոքսի ոչ ճիշտ աշխատանքի ախտանիշների մասին են վկայում: Քթարմատի ուղղահայաց կնճիռները վկայում են լյարդի եւ լեղապարկի վատ աշխատանքի մասին: Քթարմատի կամ մի հոնքի խորը կնճիռները վկայում են այն մասին, որ մարդը պարբերաբար տառապում է գլխացավերից:

(Շարունակելի)

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Պայքարն ապրելու ձեւ է դարձել հայերիս համար:

***ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ***
***(1908-1994)***
***Ամենայն Հայոց կաթողիկոս***

Չեմ ցանկանում տանել երբեք ստրկական անարգանք:

***Ն.ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ***
***(1817-1845)***
***Վրաց բանաստեղծ***

Եթե դուք որեւէ գեղեցիկ, հոգեւոր գործ եք անում, բայց դա ոչ ոք չի նկատում, մի տխրեք: Լուսաբացն աշխարհում ամենագեղեցիկ երեւույթն է, սակայն այն մարդկանց մեծ մասը չի տեսնում, քանի որ այդ ժամանակ շատերը դեռեւս քնած են լինում:

***ՋՈՆ ԼԵՆՈՆ***
***(1940-1980)***
***Բրիտանացի ռոք-երաժիշտ***

Ով կարողանում է իր ապրած յուրաքանչյուր ակնթարթը լցնել խոր բովանդակությամբ, նա էլ անսահմանորեն երկարացնում է իր կյանքը:

***ԻԶՈԼԴԱ ԿՈՒՐՑ***
***(1853-1944)***
***Գերմանացի գրող***

Այն համոզմունքը, որ հնարավոր չէ ողջ կյանքում սիրել միեւնույն կնոջը, նույնն է, թե պնդես, որ հմուտ ջութակահարը տարբեր երգերի կատարման համար տարբեր ջութակների վրա պետք է նվագի:

***ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ***
***(1799-1850)***
***Ֆրանսիացի գրող***

Երբեք մի ամաչիր սովորել հասուն տարիքում. ավելի լավ է ուշ սովորել, քան երբեք:

***Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Ü º Î ¸ à Î Ü º ð

** - Կոմերիտական ժողովներին ելույթ ունեցե՞լ ես,- հարցնում են շարքային Կյուրովին:*

*- Մեկ անգամ, այն էլ` շատ հակիրճ,- ասում է Կյուրովը:*

*- Եվ ի՞նչ ես ասել:*

*- Ասել եմ` կուղղվեմ:*

**- Հավատացա՞ծ ես, որ քո սիրած աղջիկը քեզ կսպասի:*

*- Այն էլ ո՜նց: Զորացրվելուց առաջ ես նրա կարի մեքենան էի նորոգում: Կեսը հավաքեցի, կեսն էլ թողեցի, որ զորացրվելուց հետո հավաքեմ: Ստիպված կսպասի...*

**- Ինչո՞ւ եք շնորհավորում շարքային Սյոմին:*

*- Նա կատարեց հոբելյանական հազարերորդ ցատկը: Հավատարիմ մնալով իր խառնվածքին` այս անգամ եւս չկարողացավ թռչել մարզական այծի վրայով:*

** - Շարքային Համբարձումյան, հաշվի առեք, որ ձեր պատասխանից է կախված ամբողջ դասակի գնահատականը: Ինչպիսի՞ զրահ կարող է ծակել քո թնդանոթը:*

*- Թշնամական:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՄՆ-ՈՒՄ



*Միջուկային անվտանգության գագաթաժողովին մասնակցելու նպատակով, աշխատանքային այցով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մարտի 31-ին, Սպիտակ տանը հանդիպում ունեցավ ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի հետ, ով Հայաստանի նախագահին հանդիպել էր նաեւ գրեթե մեկ տարի առաջ՝ 2015թ. մայիսի 7-ին, Վաշինգտոնի ազգային Մայր տաճարում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջկրոնական աղոթքի առիթով:*

Հանդիպմանը հայ-ամերիկյան երկկողմ հարաբերությունների օրակարգից բացի, անդրադարձ է եղել Հարավային Կովկասի տարածաշրջանի իրավիճակին, միջազգային արդի խնդիրներին ու մարտահրավերներին: Այդ համատեքստում զրուցակիցները մտքեր են փոխանակել ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի, մերձավորարեւելյան տարածաշրջանի զարգացումների շուրջ:

Զրուցակիցները հույս են հայտնել, որ Միջին Արեւելքում փոքրամասնությունների խնդիրները լուծելու, քրիստոնեական համայնքների վերադարձը խթանելու, նրանց բազմադարյա մշակույթը եւ ժառանգությունը պաշտպանելու նպատակով, գործուն ու արդյունավետ մեխանիզմներ կմշակվեն: Սերժ Սարգսյանը եւ Ջոզեֆ Բայդենը նաեւ վստահություն են հայտնել, որ, համատեղելով ջանքերը, հնարավոր կլինի դիմակայել առկա մարտահրավերներին:

ԱՄՆ կատարած այցի շրջանակներում, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Մասաչուսեթսի նահանգապետ Չարլզ Բեյքերի հետ: Այցելեց Ռամկավար ազատական կուսակցության «Պայքար» եւ Հայ Յեղափոխական Դաշնակցության «Հայրենիք» կենտրոններ, եղավ նաեւ Բոստոնի Սուրբ Ստեփանոս եւ Սուրբ Երրորդություն հայկական եկեղեցիներում:

## ԼԻԱՐԺԵՔ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻՑ

*Հայաստանի կառավարության հաստատմանն է ներկայացվել Հայաստանում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման 2015-2017 թվականների գործողությունների ծրագիրը նոր խմբագրությամբ վերասահմանելու նախագիծ:*



Ըստ հիմնավորման, ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման 2015-2017թթ. գործողությունների սահմանված ծրագրի ճշգրտմամբ, մանրամասն գործողությունների ծրագրի ընդունմամբ, վերջինով նախատեսվող միջոցառումների ամբողջ ծավալով եւ սահմանված ժամկետներում իրականացմամբ կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ՝ սկսած 2018 թվականից հանրապետությունում լիարժեք ծրագրային բյուջետավորմանն անցնելու համար:

Կազմված մանրամասն գործողությունների ծրագրի նախագիծը հավանության է արժանացել համակարգող մշտապես գործող խմբի կողմից, որն առաջարկել է նախագիծը ներկայացնել Հայաստանի կառավարություն:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Օրհնությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, մարտի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ «Ավանդական արժեքներ. ժամանակակից հասարակության զարգացման հոգեւոր-բարոյական ուղենիշները» խորագրով միջազգային մեկօրյա գիտաժողով:*

Գիտաժողովը կազմակերպել էր Սուրբ Աթոս լեռան ռուսական սրբավայրերի աջակցման բարեգործական հիմնադրամը՝ աջակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ռուս Ուղղափառ եկեղեցու եւ Ռուսաստանի կանանց միության: Գիտաժողովին մասնակցում էր ՌԴ եւ ՀՀ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, հոգեւոր եւ գիտական շրջանակների շուրջ 150 ներկայացուցիչ:

Գիտաժողովի ավարտին ներկաների կողմից ընդունվեց համատեղ հայտարարություն:

## «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Հայաստանի սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2016թ. ծրագրի պատասխանատուների մամուլի ասուլիսը: Բանախոսները Հայաստանի սփյուռքի նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնյանն ու նախարարության աշխատակազմի ղեկավար, «Արի տուն» ծրագրի համակարգող Ֆիրդուս Զաքարյանն էին:*

«Արի տուն-2016» ծրագիրը ներկայացրեց նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը: Նա նշեց, որ «Արի տուն» ծրագրին մասնակցել ցանկացողների թիվը տարեցտարի աճում է, ընդլայնվել է նաեւ երկրների աշխարհագրությունը:

2016թ. սպասվում է 13-18 տարեկան շուրջ 1100 սփյուռքահայ երիտասարդի մասնակցություն: Ծրագրի մանրամասների մասին կարելի է տեղեկանալ «aritun.am» կայքից:

Աշխատակազմի ղեկավարն ընդգծեց, որ «Արի տուն -2016» ծրագրի մեկնարկն արդեն տրված է, տեղեկատվական փաթեթն ուղարկված է սփյուռքյան կառույցներին, եւ ստացվել են մասնակցել ցանկացողների՝ այս ժամանակահատվածի համար անհամեմատ շատ հայտադիմումներ:

2016թ. ծրագիրը կընթանա 8 փուլով՝ հունիսի 12-ից օգոստոսի 27-ը: 8-րդ փուլին (օգոստոսի 14-27-ը) նախատեսվում է նաեւ «Արի տուն» ծրագրի առաջին 6 տարիների 18 տարեկան դարձած մասնակիցների հավաք:

Ծրագրի ճամբարային փուլում կանցկացվեն նաեւ հայոց լեզվի, հայրենագիտության, ազգային երգի ու պարի դասընթացներ, կլինեն հանդիպումներ Հայաստանի պետական, հասարակական, մշակութային գործիչների հետ:

## ԳՐԱՆՑՎԱԾ Է 2,3 ՄԻԼԻՈՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

*Հայաստանում գործող բանկերի հաճախորդների թիվը վերջին 6-7 տարիներին ավելացել է 2-3 անգամ, իսկ բանկային հաշիվների թիվը հասել է մոտ 2 միլիոն 300 հազարի: Ինչ վերաբերում է ըստ ոլորտների վարկերի բաշխվածությանը, ապա 2015-ին բանկերի կողմից տրամադրված վարկերի 30 տոկոսը բաժին է ընկել փոքր ու միջին բիզնեսին, 22 տոկոսը գյուղատնտեսական վարկերն են եղել, 10-15 տոկոսը՝ խոշոր վարկերը:*



Փոփոխություններով ավելացվել է ծրագրի պոտենցիալ շահառու երիտասարդների տարիքային սահմանափակման առավելագույն շեմը. երիտասարդ ամուսինների տարիքը սահմանվել է 18-35-ը, առավելագույն գումարային տարիքը՝ 65-ը: Ավելացվել է ծրագրի ներքո ձեռք բերվող բնակարանների առավելագույն արժեքը, մասնավորապես՝ սահմանելով այն 25 մլն դրամ ներկայիս 16 մլն դրամի փոխարեն:

Ավելացվել է նաեւ հիփոթեքային վարկերի առավելագույն գումարը, մասնավորապես, սահմանելով այն 17,5 մլն դրամ, ներկայիս 11,2 միլիոնի փոխարեն: Երեւանում եւս տրամադրվող հիփոթեքային վարկերի կանխավճարի նվազագույն չափը սահմանվել է ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի արժեքի առնվազն 10 տոկոսը՝ նախկին 20-30 տոկոսի դիմաց:

Ծրագրի շրջանակում պետությունը սուբսիդավորում է երիտասարդ ընտանիքի բնակարանի ձեռքբերման վարկի տոկոսդրույքը, ինչի արդյունքում, Երեւանում բնակարանների համար վարկի տարեկան տոկոսադրույքը կազմում է 8-9, իսկ մարզերում՝ 6-7 տոկոս:

### ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԱՌԱՋԻԿԱ ԱՅՑԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

*Ապրիլի մեկին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը հեռախոսազրույց է ունեցել ՌԴ կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ:*

*Զրուցակիցները քննարկել են Ռուսաստանի վարչապետի՝ առաջիկայում Հայաստան նախատեսվող պաշտոնական այցին եւ Հայաստանում անցկացվելիք Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին վերաբերող հարցեր:*

*Հեռախոսազրույցի ընթացքում Հովիկ Աբրահամյանը եւ Դմիտրի Մեդվեդեւն անդրադարձել են նաեւ հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների ընթացիկ օրակարգին, ինչպես նաեւ քննարկել առեւտրատնտեսական համագործակցությանն առնչվող հարցեր:*

### ԱՐՑԱԽՈՒՄ ԱՊՐՈՒՄ Է 151 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

*ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) ամփոփել է ԼՂՀ 2015-ի մարդահամարի նախնական օպերատիվ ցուցանիշները, ըստ ամփոփաթերթերի հանրագումարների:*

*ԼՂՀ 2015-ի մարդահամարի ժամանակ (դեկտեմբերի 1-ի դրությամբ), հաշվեգրված բնակչության նախնական օպերատիվ ցուցանիշը կազմել է 150.932 մարդ: Առկա բնակչության նախնական օպերատիվ ցուցանիշը կազմել է 146.260 մարդ: Մշտական բնակչության թվաքանակը կպայվի բոլոր հարցաթերթերի կոդավորման, մուտքագրման եւ ծրագրային մշակման արդյունքում, ինչը նախատեսվում է ավարտել 2016-ի նոյեմբերին:*

### ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԿԱԶՄՈՒՄ Է 5,1 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

*Հայաստանի պետական պարտքը, 2016-ի փետրվարի 29-ի դրությամբ, կազմել է 2 տրիլիոն 519 միլիարդ 454,7 միլիոն դրամ կամ 5 միլիարդ 120 միլիոն 427 հազար դոլար: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, պետական պարտքը, 2016-ի հունվարի համեմատ, ավելացել է 33 միլիարդ 650,8 միլիոն դրամով: Պետական պարտքի մեջ արտաքին պարտքը կազմում է 2 տրիլիոն 136 միլիարդ 497,8 միլիոն դրամ, ներքին պարտքը՝ 382 միլիարդ 956,9 միլիոն դրամ:*

### ԾԻՐԱՆԵՆԻՆԵՐԸ՝ ՀԱՐՁԱԿԱՆԻ ՏԱԿ

*Գիշերային սառնամանիքներից հետո, Հայաստանի գյուղատնտեսության նախարարությունը ներկայացրել է տեղեկատվություն ծիրանի այգիների վիճակի մասին: Ըստ տեղեկատվության, սառնամանիքից մեծապես տուժել են Արմավիրի, Արարատի մարզերի առանձին տնտեսությունների այգիները: Վնասվել են նաեւ Տավուշի եւ Լոռու մարզերի տնտեսությունները: «Ներկա դրությամբ, վնասի վերաբերյալ ստույգ խոսել հնարավոր չէ»,- նշված է տեղեկատվության մեջ:*

### ԳԱԶԻ ԹԱՆԿԱՑՈՒՄԸ ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ԱՆՏԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ

*Հայաստանում անտառների տարածքը կազմում է 332,333 հեկտար: Դրանց 25 տոկոսը գտնվում է բնապահպանության նախարարության, իսկ մյուս մասը՝ գյուղատնտեսության նախարարության իրավասության տակ:*

*Ինչպես հայտարարեց «Հայանտառ» ընկերության գլխավոր անտառապահ Ռուբեն Պետրոսյանը, 1987 թվականի համեմատությամբ, անտառների տարածքը նվազել է 12 հազար հեկտարով: 2000-2014 թթ. կորուստը կազմեց 2 հազար, իսկ ընդլայնումը՝ 1278 հեկտար: 2014թ. հատվել է 1043, իսկ 2015-ին՝ 1972 ծառ: Անտառահատումը մեծանում է բնական գազի սակագնի ավելացմամբ»,- հայտարարեց անտառապահը:*

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԱՊՐԻԼ



***02.04.2016. Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր***

Սուրբ Հարության տոնի հաջորդ շաբաթ օրը Հայ Առաքելական եկեղեցում Հիսուս Քրիստոսին մկրտողի եւ Նրա գալուստն ավետողի՝ Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օրն է:

***03.04.2016. Կրկնազատիկ (Նոր կիրակի)***

Կրկնազատիկ է կոչվում երեք պատճառներով:

Զատիկ նշանակում է նաեւ ազատություն, եւ այդ օրը կրկնակի ազատության օր է: Աստված մեզ ազատել է մեղքերից, սակայն մենք գտնվում ենք կրքերի ազդեցության ներքո: Իսկ երբ Աստված ամեն ինչ նոր է անում եւ բոլոր կարիքներից մեզ ազատում, դա կոչվում է Կրկնազատիկ: Կրկնազատիկ է կոչվում մեր հարության պատճառով: Քրիստոս առաջին կիրակի օրը մեզ հարություն տվեց Իր հոգով ու զորությամբ, իսկ երկրորդ կիրակի օրը մեզ հարություն է տալու ըստ մարմնի եւ, մեռելներից հարություն առնելով, պիտի անմահանանք: Նոր կիրակի եւ Կրկնազատիկ է կոչվում, քանզի նորովի ենք տոնում մեր հոգու փրկության նավակատիքը՝ հոգեւոր ուրախությամբ ու տոնախմբությամբ:

***07.04.2016. Սուրբ Աստվածածնի ավետումը***

## ՏՐԱՆՍՊՈՐՏ

### ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍԸ ԲԱՑ Է ՄԱՐԴԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Մարտի վերջի առատ ձնատեղումները առանձնակի բարդ իրավիճակ ստեղծեցին երկրի բարձրալեռ տարածաշրջաններում: Ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի եւ կոնտակտոր կազմակերպությունների աշխատակիցները 24-ժամյա աշխատանքներ են իրականացնում երթեւեկության ապահովման նպատակով:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտը, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար:

## ԿՐԹԱԿԱՆ

### ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ՝ ԱՊՐԻԼԻ 4-ԻՑ

*Վրաստանի հանրային դպրոցներում առաջին դասարանցիների գրանցումն սկսվում է ապրիլի 4-ից:*

Ապրիլի 4-ից մինչեւ 18-ը գրանցում կարող են անցնել այն աշակերտները, ում քույրերը կամ եղբայրները սովորում են այդ դպրոցում, ում ծնողներն աշխատում են այդ դպրոցում, եւ ում ընտանիքից առաջին դասարան են գնալու երկու ու ավելի երեխաներ:

Գրանցման երկրորդ փուլը կմեկնարկի մայիսի 4-ին եւ կշարունակվի մինչեւ մայիսի 25-ը: Դրան կարող են մասնակցել բոլոր մնացած աշակերտները, նաեւ նրանք, ովքեր առաջին փուլում գրանցում չեն անցել:

### ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ

*Վրաստանի հանրային դպրոցների նոր ուսումնական տարվա մեկնարկը կիրականացվի սեպտեմբերի 15-ին, իսկ տարին կեզրափակվի հունիսի 10-ին հաջորդող առաջին ուրբաթ օրը:*

Այն դեպքում, եթե սեպտեմբերի 15-ը շաբաթ կամ կիրակի է, ապա տարին կմեկնարկի սեպտեմբերի 15-ից հետո՝ առաջին աշխատանքային օրը:

Այն դեպքում, եթե հունիսի 10-ը լինի ուրբաթ, ապա ուսումնական տարին կավարտվի այդ օրը:

### ՍԿՍՎԵՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

*Մարտի 28-ից Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը սկսեց մասնագիտական կրթություն ստանալ ցանկացողների գրանցումը:*

Անկախ տարիքից, բոլոր շահագրգռված անձինք, պետության լրիվ ֆինանսավորման պայմաններում կարող են գլխավորապես պետական կրթական հաստատություններում յուրացնել գբոսաշրջության, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի տեղեկատվական տեխնոլոգիաների եւ այլ ուղղությունների ոլորտների մասնագիտություններ:

Ցանկալի ծրագիրը եւ ուսումնարանը կարելի է ընտրել քննությունների եւ մասնագիտական կրթության ազգային կենտրոնի կայքէջից:

Գրանցումը կշարունակվի մինչեւ ապրիլի 10-ը:



Ա.Ծուլուկիձեի անվան ուրոլոգիայի ազգային կենտրոնը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խոր վշտով հայտնում են, որ վախճանվել է կենտրոնի աշխատակից, բժշկական գիտությունների դոկտոր

***Միքայել ԽԱՉԱՏՈՒՐՈՎԸ***

եւ ցավակցություն հայտնում հանգուցյալի հարազատներին ու ընտանիքի անդամներին:



«Վրաստան» թերթի խմբագրությունը, Վրաստանի գրողների միությունը եւ նրա հայկական մասնաճյուղը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը խոր վշտով հայտնում են, որ Մոսկվայում, 77 տարեկան հասակում, վախճանվել է անվանի արձակագիր Բենիկ Սեյրանյանի որդին՝ ճանաչված երկրաբան, մանկագիր

***Վալերի Բենիկի ՍԵՅՐԱՆՅԱՆԸ***

եւ ցավակցում հանգուցյալի որդիներին ու հարազատներին:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Թբիլիսահայ գրող եւ սցենարիստ ... Մանվելյան: 6.Ե'ւ Շերիֆ, ե'ւ Խայամ: 9.Ռշտունյանց օրիորդը Րաֆֆու «Սամվել» վեպում: 10.Ձիերի խումբը: 12.Լարային երաժշտական գործիք: 13.Իոսիֆ Ստալինի ծխելու գործիքը: 17.Անականի գերադրական աստիճանը: 20.Հայերենի վերջածանց: 21.ԱՄՆ-ի նահանգներից: 24.Շրջան եւ շրջկենտրոն ԼՂՀ-ում: 26.Կոկորդի հիվանդություն: 27.Գրագիր եկեղեցում: 28.«... սպասիր» մուլտֆիլմ: 29.Թբիլիսիում ծնված օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 30.Դետեկտիվ գրող ... Կոնան Դոյլ: 31.Անձնական դերանուն: 33.Մայրության, պտղաբերության աստվածուհին հայոց դիցաբանության մեջ: 35.Խոնավ, թաց: 36.Քաղաք Հայաստանի Սյունիքի մարզում: 39.Թանկագին քարերի կշռաչափ: 42.Նար-Դոսի հերոս դրոգապանը: 43.Որսի կենդանի: 44.Ալեքսանդր Դյումա «... թագուհին»: 45.Գիշերային թռչուն: 46.Հարցական դերանուն: 47.Պետության խորհրդանիշ: 48.Գույն՝ ... կարմիր: 49.Առաջին դեմքի անձնական դերանուն: 50.Սեւանի ձկնատեսակ: 52.Հայտարարություն, ծանուցում, գովազդ: 55.«... աշխատի, նա ուտի» առած: 57.Օժանդակ բայ: 58.Ապակու, հայելու կտոր: 59.«Առավոտ» թերթի խմբագիր ... Աբրահամյան: 60.Հայկական ծխախոտ՝ ... բերդ: 61.Եվրոպացու եւ նեգրի միախառնումից ստացված խումբը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ե'վ Վշտունին, ե'ւ Շերենցը, ե'ւ Գասպարյանը: 3.Թեւավոր կարճ խոսք: 4.Խելացի, դատող: 5.Գրենական պիտույք: 7.Արցախյան հերոս ազատամարտիկ ... Մելքոնյան: 8.Թբիլիսահայ անվանի գրող Գ.Սունդուկյանի հայտնի կատակերգությունը: 11.Եղջերու, այծյամ: 14.Սուգ, կական: 15.Քաղաք Հայաստանի Գեղարքունիքի մարզում: 16.Թբիլիսիի պետհայդրամայի ներկայացումներից «..., դատարանն է գալիս»: 18.Միավորված ազգերի կազմակերպություն: 19.Ուտելի կանաչի: 20.Մուրացանի վեպի հերոսուհի: 22.Դերասանուհի ... Դենս: 23.Աներոջ որդին: 24.Ավերված ու հրդեհված քաղաք թուրքերի կողմից: 25.Մսամթերք: 29.Վրաց երգչուհի Բրեգվաձեն: 31.Հայ երիտասարդ երգչուհի ... Գեւորգյան: 32.Հովհ.Թումանյանի Բազազը: 34.Անտառների գոտի: 37.Իտալացի կինոռեժիսոր եւ սցենարիստ ... Սորրենտինոն: 38.Հայաստանում լույս ընծայող պարբերական (անգլ.) «... տայմս»: 40.Անվանի դերասանուհի ... Ասրյան: 41.Վրացական ֆիլմ «... Աչուկի»: 44.Թումանյանական հերոս: 47.Հայ ֆիդայի Նիկոլը: 49.Առարկայի կամ բույսի ցցված մաս: 51.Քաղաք Վրաստանում: 53.Հարվածային երաժշտական գործիք: 54.«Մխիթար Սպարապետ» հեղինակ Խանզադյանը: 56.Հայոց մայրաքաղաքներից: 59.Մակերեսի չափման միավոր:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Բարկաս: 6.Զամբիկ: 9.Թաթուլ: 10.Տրեխ: 11.Լիմբ: 12.Մոլլա: 13.Օպերա: 15.Սամբա: 18.Մամուլ: 20.Կոմիտաս: 22.Արմադա: 23.Ատլանտ: 24.Պարաբոլ: 25.Մուրաբա: 26.Տատրակ: 28.Լիբրետո: 32.Ամիկո: 33.Դիդրո: 34.Սկուդո: 36.Պինտա: 38.Զոլա: 40.Կույս: 41.Գրիմ: 42.Կզաքիս: 43.Դոնդող:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բատիստ: 2.Կոխ: 3.Սոսո: 4.Օթելլո: 5.Ալուպկա: 6.Զեբր: 7.Մոլ: 8.Կոբալտ: 12.Մադադանոս: 14.Ամպլիտուդա: 16.Մերկուրի: 17.Սինատրա: 19.Մանսարդ: 20.Կապալ: 21.Սալտո: 27.Բալզակ: 29.Ինդիգո: 30.Տրիտոն: 31.Փորսուղ: 35.Կոքս: 37.Տենդ: 39.Ասք: 40.Կոն:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445